

հետ մանրամասնաբար հաջիւ տեսնելուց յետոյ, տուին ինձ օրինաւոր ստորագրութիւն հաշուետեսութեան մասին:

Ըստ իմ կարեաց Ս. Նշան եկեղեցւոյն մօտ 25 ամիս ծառայելուց յետոյ գրաւոր հրաժարական տուի եւ դուքս եկալ պաշտօնից:

Ս. Նշան եկեղեցու երեցփոխ. Մ. ՏԵՐ ԱՐԳՍԵԱՆ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆԷ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ 12 Յունուարի ընդ համարաւ 21՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան տղայոց ուսումնարանի Զրկինենց Ս. Կարապետ եկեղեցւոյ Հայոց Տփխիս քաղաքի՝ Բարեկրօն Ներսէս քահանայն Տէր Բարսեղեանց եւ պատուելիք՝ Յովսէփ Ստեփանեան Անանեանց, Մովսէս Մարկոսեան Յաւութիւնեանց եւ Գէորգ Լուարսաբեան Կուզանեանց:

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ 12 Յունուարի ընդ համարաւ 22՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան տղայոց ուսումնարանի Կաթուղիկէ Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց Տփխիս քաղաքի՝ Բարեկրօն Գարեգին քահանայն Մատինեանց, Ստեփաննոս քահանայն Սամուէլեանց եւ պատուելիք՝ Կամսար Տէր Դաւթեանց եւ Քալանթար Քալանթարեանց:

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս յ 12 Յունուարի ընդ համարաւ 23՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Արդուին քաղաքի, պատուելիք՝ Մկրտիչ Յակովբեան Վաթուկեանց, Անտոն Զօհրապեանց, Աբրահամ Գուրգինեանց եւ Մահտեսի Մկրտիչ Աղնաւուրեանց:

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Յունուարի ընդ համարաւ 24՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան տղայոց ուսումնարանի Պետիգորսկ քաղաքի պատուելիք՝ Բաղդասար Էմմանուէլեան Խօջայեանց, Յովհաննէս Մարտիրոսեան Բաբասինեանց, Ղազարոս Ղուկասեան Սվեչնիկեանց, Դաւիթ Գարրիէլեան Քիւրճեանց, Գէորգ Յովհաննիսեան Մանտաշեանց եւ Խաչիկ Կարապետեան Թամանեանց:

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Յունուարի ընդ համարաւ 31՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական մի-

դասեան աղայոց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Մեծ Բեափանակ գեղջ Բարեկրօն Յակովբ քահանայն Աւետիսեան և պատուելիք երեսփոխան Ղուկիանոս Սարգսեանց և Բարսեղ Եղեկեան:

Վեհափառ Հայրապետն Ազգիս իւրով Հայրապետական կոնդակաւ ի 16 ներկայ Յունուարի ընդ համարաւ 30՝ բարեհաճեցաւ արժանաւորել զգերապատիւ առաջնորդն թեմին Հայոց Համախոյ զՍրբազան Մեսրովք եպիսկոպոսն Սմբատեանց Արքեպիսկոպոսական կոչման, ի նկատի առեալ զբազմամեայ ծառայութիւնս նորա յԱնդամութեան Սինօդի Սրբոյ Էջմիածնի և զԱռաքելաշաւիղ ընթացս յԱռաջնորդական պաշտաման:

16 Դեկտեմբ. (1887) Նորին Օծութիւն Վեհափ. Կաթողիկոսը բահահաճեց կոնդակաւ յայտնել Սինօդին, որ հաւաստի աղբիւրներից տեղեկանալով Վաղարշապատու երկսեռ դպրոցների կարօտաւոր դրութեանը և գթալով իւր ժողովրդեան ուսումնակարօտ զաւակաց վրայ՝ հրամայում է սպանդանոցի և անօթապատկան վաճառանոցի մեծ կշռի տարեկան արդիւնքը, 342 ր. 50 կ. ժամանակաւորապէս յատկացնել յիշեալ դպրոցներին, ցնոր կարգադրութիւն:

16 Դեկտ. Նոր—Նախիջևանցի պ. Յովհաննէս Թադէոսեան Բէօլլէ—Հահինեանց իւր բարեյիշատակ հօր, Թադէոս Բէօլլէ—Հահինեանցի կտակած 5% տոկոսաբեր 3 բանկային արևելեան փոխառութեան տոմսերը, իւրաքանչիւրն 100 ր. արժողութեամբ, Բեսարաբիայի Վոնսիստորիայի միջոցով ուղարկել է Սինօդ, յօգուտ ճեմարանի Մայր—Աթոռոյս: Պ. Բէօլլէ—Հահինեանցը մի 100 ր. բանկ. տոմս էլ նուիրել է Նոր—Նախիջևանի Ս. Հռիփսիմեան օրիորդաց դպրոցին, նաև մի զանգակ 20 փութ ծանրութեամբ նոյն քաղաքի Ս. Թէոդորոս եկեղեցուն:

21 Դեկտ. Սինօդը վճռեց Ցաթևու հռչակաւոր և խորխալեալ վանքը վերանորոգել յառաջիկայ դարնան, ծախսելով 1000 ռուբլի վանքի եկամտից, իսկ Հուլեցի Մարգարայ բեգ Ղարաբեօզեանցի կազմած նախահաշուով նշանակեալ մնացած 5018 ր. 50 կոպէկը (ընդ մմենը՝ 6018 ր. 50 կ.) ժապաւինեալ մատենով ժողովել Գանձակ նահանգի բարեպաշտօն ժողովրդականներից, յանձնելով վերաշինութեան հսկողութիւնը տեղւոյն վանահօր, փոխանորդ Արժ. Անանիայ վարդապետին:

21 Դեկտ. Անդամ Սինօդի, Գերապ. Սարգիս Եպիսկոպոս կարի թախանձանօք խնդրած լինելով Նորին Վեհափառութիւնից ազատ մնալ ծախսարարութիւնից, վատառողջութեան պատճառով, նորա տեղը նշանակուեցաւ Գերապ. Կարապետ Եպիսկոպոս, արձակուելով Ս. Գայիանէ վանքի վանահայրութիւնից, նախանդամ վանքական կառավարութեան: Իրրև ան-

գամ նոյն կառավարութեան նշանակուած են՝ Արժ. Յովսէփ վարդապետ Խարաղեան և Ներսէս վարդապետ Փարպեցի:

23 Դեկտ. Երևում է Սինօդի գործերից որ Բնասարաբիոյ, Ղարաբաղի և Ասորականի թեմերը նախանձախնդիր լինելով Ս. Աթոռոյս և Ճեմարանի բարգաւաճման և չնայելով իւրեանց դրամական անձուկ դրութեան, չեն դանդաղում մասն հանել վիճակային արդիւնքներից թէ Ճեմարանին և թէ Աթոռոյս, որի վրայ ծանրանում է Ճեմարանի բոլոր ծախսը, Երևանայ թեմի արդիւնքներն էլ ամբողջովին մանում են Աթոռոյս գանձարանը, մի-միայն վրաստանի արդիւնաշատ և բազմամարդ թեմն է մնում անմասն ուստի և հրամայեցին՝ պսոսհետեւ այդ թեմի մետրիքական վկայագրերից գոյացած արդիւնքը ամբողջովին վերապահել յօգուտ Ճեմարանի:

30 Դեկտ. ի նկատի առնելով, որ Նոր—Բայաղխի Ներքին—Ադիաման գիւղի Յովհաննէս քահանան մնում է անսանձ և պախարակելի վարքով հակառակ իւր տուած մեղադրական խնդիրների և պարտաւորական ստորագրութեանց, Հարունակում է ինքնագլուխ գործել ընդդէմ Հոգեւոր իշխանութեան, կատարում է չհաս պսակներ ևլն, և որովհետեւ յոյս չկայ այլ ևս նորա ուղղութեան և դարձին, ուստի քաղաքական իշխանութեան ձեռքով համաթուել նորան սոսկ աշխարհականաց շարքը, նախապէս կարկընդէք առնելով, Նորա կատարած արգելեալ և չհաս պսակները համարել անվաւեր:

30 Դեկտ. Նոյնպէս կարգընկէց առնել Նոր—Նախիջևանու Նիսվիտայ գիւղի քահանայ Մովսէս Զարիֆեանցին ի նկատի ունենալով նորա արբեցողական, պոռնկական, գայթակղելի և անուղղայ ընթացքը և թուել ի շարս սոսկ աշխարհականաց, Իսկ այս կարգաւոյժ քահանայի դեռահաս զաւակների անդեան և պահպանութեան համար նշանակել օժանդակութիւն հոգեւորականաց որքոց և այրեաց խնամարկութեան արկղից: